

14953

ՈՒՄ ԵՆՔ ՄԵՆՔ  
ՈԳՆՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄ

32

174-48

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1939

32  
DL-48

26 SEP 2006

1 DEC 2009

Այ

ՈՒՄ ԵՆՔ ՄԵՆՔ  
ՈԳՆՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՑԵՐԵՎԱՆ • 1939



27 AUG 2013

14953

ՊԱՏՄԱԿԱՆ ՎՃԻՌ

Սեպտեմբերի 17-ին քաջարի Կարմիր Բանակի զորքերը Խորհրդային կառավարութեան կարգադրութեամբ անցան սահմանը, վորպեսզի իրենց պաշտպանութեան տակ առնեն Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի բնակչութեան կյանքն ու գույքը: Ամբողջ խորհրդային ժողովրդի մտքերն ու զգայմունքները ջերմորեն սիրելի, հարազատ, անպարտելի Կարմիր Բանակի հետ են: Պանծալի մարտիկները զինվորական սխրագործութեաների յեն գնում Լենինի-Ստալինի կուսակցութեան հերոսական դրոշի տակ, հենվելով ամբողջ Խորհրդային յերկրի հզորութեան և ուժի վրա: Յերկիրը նրանց հղում է իր բոլշեիկյան բոցավառ վողջույնը: Նա հպարտանում է իր զավակներով, վորոնք կատարում են բարձր, սրբազան մի պարտք—մեր արյունակից յեղբայրներ՝ ուկրաինացիների և բելոռուսների պաշտպանութեանը, վորոնք յերկար ժամանակ տառապում էին լիհական պաների ձեռքին՝ ծանր ստրկութեան մեջ:

Ամբողջ բազմամիլիոն խորհրդային ժողովուրդն ամենախոր ուշադրութեամբ լսում էր ռադիոյով ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիտեաների Խորհրդի Նախագահ ընկ. Վ. Մ. Մոլոտովի արտասանած պատմական ճառը: Այդ հիանալի ճառի մեջ, ԽՍՀՄ կառավարութեան նոտայի մեջ, վորը հանձնվեց Մոսկվայի լիհական դեսպանին, ցույց են տրված միջազգային իրադրութեան մեջ կատարված այն փոփոխութեանները, վորոնց հետևանքով Խորհրդային կառավարութեանը Կարմիր Բանակի Գլխավոր հրամանատարութեանը կարգադրեց հրաման տալ զորքերին՝ անցնելու սահմանը:



4865  
39

КОМУ МЫ ИДЕМ  
НА ПОМОЩЬ

Государственное издательство полит. литературы  
Бреван ● 1939



«Լեհ-գերմանական պատերազմը յերևան բերեց լեհական պետութիան ներքին սնանկությունը: Պատերազմական գործողությունների տաս սրվա ընթացքում Լեհաստանը կորցրեց իր բոլոր արդյունարերական շրջանները և կուլտուրական կենտրոնները: Վարչական, վորպես Լեհաստանի մայրաքաղաք, այլևս գոյություն չունի: Լեհական կառավարությունը քայքայվել է և չի ցուցաբերում կենդանության նշույլներ: Այդ նշանակում է, վոր լեհական պետությունը և նրա կառավարությունը փաստորեն դադարել են գոյություն ունենալուց: Դրանով իսկ դադարեցրել են իրենց գործողությունը ԽՍՀՄ և Լեհաստանի միջև կնքված պայմանագրերը», — մատնանշվում է ԽՍՀՄ կառավարության նոտայի մեջ, վոր հանձնված է Մոսկվայի լեհական դեսպանին:

Լեհական ծվենակագմ պետությունը, վորը կառուցված էր ազգային փոքրամասնությունների ճրնչման, կողոպտման վրա, ցույց տվեց իր ամբողջ անկենսունակությունը, իր ներքին սնանկությունը, քանդվեց թղթե սնակի պես: Ամենակարճ ժամանակամիջոցում լեհական կառավարող շրջանները սնանկացան: Լեհաստանի խղճուկ կառավարությունը փախավ, ժողովրդին թողնելով բախտի քմահաճույթին: Բանակը չունեցավ վոչ մի ոպերատիվ հաջողություն: Նրա զլայի մասը բռնի կերպով հավաքագրված է ազգային փոքրամասնություններից, վորոնք ատում են պանական Լեհաստանը — ժողովուրդների բանտը: Պարզ է, վոր այդպիսի բանակն անընդունակ է հաջողությամբ կովելու:

Լեհաստանում ստեղծված դրությունը, լեհական

պետութիան քայքայումը, Լեհաստանում տիրած սնարխիան ու անկարգությունը Լեհաստանին դարձրին հարմար սապարեղ ամեն տեսակ պատահականությունների ու անակնկալների համար, վորոնք կարող են սպառնալիք ստեղծել ԽՍՀՄ համար: Հիշյալ հանդամանքների հետևանքով Խորհրդային կառավարությունն այլևս չէր կարող չեզոք վերաբերվել ստեղծված դրությանը: Խորհրդային կառավարությունը նաև չէր կարող անտարբեր վերաբերվել Լեհաստանում բնակվող արյունակից ուկրաինացիների և բելոստանների բախտին, չէր կարող նրանց թողնել անպաշտպան:

«Խորհրդային կառավարությունն իր սրբազան պարտականությունն է համարում ողնության ձեռք մեկնել իր յեղբայր ուկրաինացիներին և յեղբայր բելոստաններին, վորոնք ապրում են Լեհաստանում»: Ընկեր Վ. Մ. Մոլոտովի այս հուզիչ բառերը կայծակի արագությամբ տարածվեցին մեր ամբողջ յերկրում: Ամենուրեք դրանք հսկայական խանդավառություն առաջացրին: Բոլորին վառեցին պայքարի ու հաղթանակի խանդավառությամբ: Այդ բառերը կըրկնված են միտինդների և ժողովների հազարավոր բանաձևերի մեջ: Խորհրդային քաղաքայինները միմյանց հանդիպելիս այդ բառերն են արտասանում:

Յերեկ հաղորդադրություն հրատարակվեց այն մասին, վոր լեհական կառավարությունը փախել է Ռումինիա: Այդ կրկին անգամ հաստատում է լեհական պետութիան լիակատար քայքայման փաստը: Արևմտյան Բելոստախյում և Արևմտյան Ուկրաինայում ամենուրեք խորհրդային զորքերն արագորեն



առաջ են շարժւում, չհանդիպելով քիչ թե շատ լուրջ դիմադրութեան: Այդ ևս կրկին անգամ վկայում է լեհական պետութեան, լեհական բանակի լիակատար քայքայման ու տարրալուծման մասին:

Մեր յեղբայր արեւմտյան ուկրաինացիներն ու բելոռուսները հրճվանքով ու ցնծութեամբ են գիմալորում քաջարի Կարմիր Բանակը, վորը նրանց ազատում է ազգային ճնշումից, լեհական պան-կարվածատեղերի ճնշումից: Արեւմտյան Ուկրաինայի և Արեւմտյան Բելոռուսիայի աշխատավորներն ու բախութեան արտասուքն աչքերին նետվում են հրամանատարների ու կարմիրբանակայիների գիրկը, հուզիչ հոգատարութեան են ցուցաբերում Կարմիր Բանակի նկատմամբ: Բնակիչներն ընդառաջ են յեղում տոնական հաղնված, ծաղիկներ են մատուցում, մարտիկներին հյուրասիրում են խնձորով, կաթով:

Արեւմտյան Ուկրաինայի և Արեւմտյան Բելոռուսիայի բնակիչները Կարմիր Բանակին դիմաւորում են վորպէս ազատարար բանակի, վորպէս յեղբայրակից ժողովրդի բանակի, վորն ուզում է նրանց ոգնել՝ ապրելու յերջանիկ ու խաղաղ կյանքով: Արեւմտյան Ուկրաինայի և Արեւմտյան Բելոռուսիայի յեղբայրների նկատմամբ սիրո ալիք է սլանում մեր Կարմիր Բանակի հետեւից: Այդ սերը թեւավորում է մեր մարտիկներին: Այդ բարեկամութեանն ու սերը կղզա նախկին լեհական պետութեան տերիտորիայում յուրաքանչյուր ուկրաինացի, յուրաքանչյուր բելոռուս՝ խղճուկ, պաների կողմից ավերված խրճիթներում:

Խորհրդային յերկիրը հանդիստ ու վեհ ուժով կատարում է իր սրբազան խնդիրը: Մեկ մարդու պէս նա հսկայական հզորութեամբ արձագանգեց Խորհրդ-

դային կառավարութեանը գլխավորողի ճառին: Անխղճի յե ամբողջ խորհրդային ժողովրդի միասնութեանն իր կառավարութեան հետ, իր հարազատ բուշեւիկյան կուսակցութեան հետ, իր մեծ առաջնորդ ընկեր Ստալինի հետ:

Խորհրդային Միութեանն ուզում է բոլոր յերկրներին հետ հաշտ ապրել: Խորհրդային կառավարութեանն է լուր ամենքի հայտարարեց, վոր Խորհրդային Միութեանը չեզոքութեան քաղաքականութեան կիրառի այն բոլոր յերկրներին վերաբերմամբ, վորոնց հետ ԽՍՀՄ-ն դիմանադիտական հարաբերութեաններ ունի: Խաղաղութեան շահերից յեղնելով եր, վոր չհարձակվելու պայմանագիր կնքվեց ԽՍՀՄ և Գերմանիայի միջև: Սեպտեմբերի 18-ի գերման-խորհրդային կոմյունիկեն ցույց է տալիս, վոր չհարձակվելու պակտը գտնվում է գործողութեան մեջ: ԽՍՀՄ քառավարութեանը և Գերմանիայի կառավարութեանը հայտարարում են, վոր խորհրդային և գերմանական զորքերի գործողութեանները «չեն հետապնդում Գերմանիայի կամ Խորհրդային Միութեան շահերին հակառակ գնացող և Գերմանիայի ու ԽՍՀՄ միջև կնքված չհարձակվելու պակտի վորոնն ու տառին հակասող վորեւ նպատակ: Ընդհակառակը, այդ զորքերի խնդիրն է,—ասվում է կոմյունիկեյի մեջ,—վերականգնել Լեհաստանում կարգն ու հանդատութեանը, վորոնք խախտվել են լեհական պետութեան քայքայման հետեանքով, և ոգնել Լեհաստանի բնակչութեանը՝ վերականգնելու իր պետական գոյութեան պայմանները»:

Հայրենասիրական մեծ խանդավառութեանը հա-



մակել և մեր յերկիրը: Հուզիչ ճառեր են հնչում մի-  
տինգներում: Այս ճառերի մեջ, միտինդների բանա-  
ձևերի մեջ լիակատար հավանություն և տրվում ինք-  
հրդային կառավարության խմաստուն արտաքին քա-  
ղաքականությանը և պատրաստակամություն և հայտ-  
նելվում՝ ամբողջ ուժը տալու մեր հայրենիքի բարո-  
րության համար:

Կիրովյան գործարանի (Լենինգրադ) բանվորներն  
ու ծառայողները 18.000-անոց միտինգի բանաձևի մեջ  
ասում են.

«Կառավարության վճիռը այն մասին, վոր Կար-  
միր Բանակի զորամասերը դրավեն Արևմտյան Ուկ-  
րաինան և Արևմտյան Բելոռուսիան, ամբողջ 170-մի-  
լիոնանոց խորհրդային ժողովրդի կամքի արտահայ-  
տությունն է... Հավանություն տալով մեր կառավա-  
րության քաղաքականությանը, Կիրովյան գործարանի  
կոլեկտիվը հավաստիացնում է կուսակցությանը, կա-  
ռավարությանը և ժողովուրդների առաջնորդ ընկեր  
Ստալինին, վոր մենք կգործադրենք մեր ամբողջ ուժն  
ու յեռանդը՝ աշխատանքի արտադրողականությունն  
ել ավելի բարձրացնելու, մեր սիրելի հայրենիքի  
ոսպմական հզորությունն ամրապնդելու նպատակով  
արտադրանքի քանակն ավելացնելու համար»:

«Ուկրհարել» գործարանի բանվորները, ծառայող-  
ները, ինժեներ-տեխնիկական աշխատողները դիմում  
են արյունահից ժողովուրդներին.

«Մենք ձեզ հեռ ենք, Արևմտյան Ուկրաինայի և  
Արևմտյան Բելոռուսիայի թանգազին յեղբայրներ:  
Մենք անտարբեր չենք մնա ձեր վիճակի նկատմամբ:  
Մենք պատրաստ ենք մեր խորհրդային կառավարու-

թյան, մեր կուսակցության, հարազատ Ստալինի  
առաջին իսկ կոչով կանգնելու ԲԳԿԻ շարքերը և ձեզ  
ողնելու, վոր ջախջախեք լեհական պաներին ու  
ազատվեք ճնշումից և շահագործումից»:

Մեր Կարմիր Բանակը պատվով կատարում է իր  
պարտքը: Նա նոր հաղթանակներ կմիացնի այն պան-  
ծալի հաղթանակներին, վորոնք դրի յեն առնված  
ինքհրդային յերկրի հերոսական պատմության մեջ:  
Թող յուրաքանչյուր քաղաքացի իր պոստում—գոր-  
ծարանում՝ դադդյասի առաջ, կոլտնտեսային դաշտե-  
րում՝ գութանի առաջ, հիմնարկում, խանութում,  
ամբիոնի վրա, լաբորատորիայում ագնիորեն կատարի  
իր պարտքը: Յուրաքանչյուր աշխատանքային պոստ  
մեր յերկրում մարտական պոստ է:

«Խորհրդային Միության ժողովուրդները, մեր  
յերկրի բոլոր քաղաքացիներն ու քաղաքացուհիները,  
Կարմիր Բանակի և Ռազմա-Մոլային նավատորմի  
մարտիկները, ինչպես յերբեք, համախմբված են ինք-  
հրդային կառավարության շուրջը, մեր բուլլեիկյան  
կուսակցության շուրջը, իրենց մեծ առաջնորդի շուրջը,  
խմաստուն ընկեր Ստալինի շուրջը, աշխատանքի նոր ու  
դեռ շտեմնված հաջողությունների համար՝ արդյու-  
նարեության մեջ և կոլտնտեսություններում, Կար-  
միր Բանակի նորանոր պանծալի հաղթանակների հա-  
մար՝ մարտական ճակատներում»: (Մոլոտով):

«Правда» 1939 թ. սեպտեմբերի 19:



ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻ

### ՈՒՄ ԵՆՔ ՄԵՆՔ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄ

Խորհրդային կառավարութիւնը Կարմիր Բանակի Գլխավոր հրամանատարութեանը կարգադրեց հրաման տալ զորքերին՝ անցնելու Լեհաստանի սահմանը և իրենց պաշտպանութեան տակ վերցնելու Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի բնակչութեան կյանքն ու գույքը:

Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի Գլխավոր շտաբի սպերատիւլ ամփոփագրերը, վոր հրապարակվեցին յերեկ և այսօր, ցույց են տալիս, վոր խորհրդային զորքերը հաջողութեամբ կատարում են ԽՍՀՄ կառավարութեան կողմից իրենց առաջ դրված խնդիրը: Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի այն քաղաքներում, գյուղաքաղաքներում և գյուղերում, վոր գրավում է Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը, բնակչութիւնը մեր զորամասերին դիմավորում է հսկայական ուրախութեամբ ու ցնծութեամբ:

Ընկեր Վ. Մ. Մորոտովը սեպտեմբերի 17-ին

առաջիցով արտասանած իր ձառի մեջ բացատրեց, թէ ինչու Խորհրդային կառավարութիւնը դադարեցված հայտարարեց ԽՍՀՄ և Լեհաստանի միջև կնքված պայմանագրերի գործողութիւնը և ոգնութեան գնաց Լեհաստանում բնակվող արշունակից ուկրաինացիներին և բելոռուսներին:

Անցել է լեհ-գերմանական պատերազմի ինչ-վոր մի-յերկու շաբաթ միայն, իսկ Լեհաստանն արդէն կորցրել է իր բոլոր արդյունաբերական ոջախները, կորցրել է խոշոր քաղաքների և կուլտուրական կենտրոնների մեծ մասը: Լեհական կառավարող շրջանները սնանկացել են, վոչ վոք չգիտե, թէ վորտեղ է գտնվում լեհական կառավարութիւնը: Լեհաստանի բնակչութիւնը իր ձախողակ, սնանկ ղեկավարների կողմից թողնված է բախտի քմահաճույքին: Համաշխարհային մամուլը լիքն է տեղեկութիւններով այն մասին, վոր Լեհաստանի պրեզիդենտ Մոսցիցկին, մինխտորներն ու գեներալները չվիւ են Ռումինիա: Լեհական բանակը զրկվել է միասնական հրամանատարութիւնից, տրոհվել է առանձին բարոյալքված զորամասերի: Ամերիկական «Նյու-Յորք հերալդ տրիբուն» լրագրի թղթակցի հաղորդագրութեան մեջ այսպէս է բնութագրվում լեհական բանակի վիճակը. «Լեհական բանակը լիովին բարոյալքվել է: Զինվորները թափառում են յերկրով մեկ առանց ուտելիքի»:

Լեհական պետութիւնը և լեհական կառավարութիւնը փաստորեն դադարել են գոյութիւն ունենալուց:

Լեհական պետութեան քայքայումը Լեհաստանում ստեղծել է մի դրութիւն, վորը Խորհրդային կառա-



վարությունից պահանջում է հատուկ հոգնատարու-  
թյուն իր պետութեան անվտանգութեան վերաբեր-  
մամբ: Վորովհետև Լեհաստանը հարմար ասպարեզ է  
դարձել ամեն տեսակ պատահականությունների ու  
անակնկալների համար, վորոնք կարող են սպառնա-  
լիք ստեղծել ԽՍՀՄ համար:

Դրա հետ մեկտեղ «Սորհրդային կառավարութեանը  
նրն իր սրբազան պարտականությունն է համարում  
ոգնութեան ձեռք մեկնել իր յեղբայր ուկրաինացիներին  
և յեղբայր բելոուսներին, վորոնք ապրում են  
Լեհաստանում»:

Սորհրդային կառավարութեանը միաժամանակ  
հայտարարեց, վոր նա մտադիր է ամեն միջոցի դի-  
մել, վորպեսզի լեհ ժողովրդին դուրս բերի այն չա-  
րաբաստիկ պատերազմից, վորի մեջ նրան դեռ են  
նրա անմիտ զեկավարները, և հնարավորութեան տա-  
նրան ապրելու խաղաղ կյանքով:

Քսան տարվա ընթացքում ամբողջ աշխարհը վկա  
յիւր այն բանին, թե ինչպես լեհական կառավարող  
զասակարգերը ժողովուրդներին դցում էին տանջան-  
քի, աղքատութեան և, վերջապես, չարաբաստիկ պա-  
տերազմի մեջ: Այժմ ամբողջ աշխարհը տեսնում է,  
թե ինչի հասցրեց լեհական մազնատների տեր ու  
տնորինութեանը: Քսան տարի առաջ արհեստականորեն  
ստեղծված՝ Լեհաստանի բազմազգ պետութեանը  
փլուզում է կրում, վորովհետև Լեհաստանի կեղեք-  
ված ազգային փոքրամասնությունները և կեղեքված  
աշխատավորական մասսաները սուր կերպով դիտակ-  
ցում են, վոր իրենք վոչ մի պատճառ չունեն պայքա-  
րելու հանուն այն Լեհաստանի, վորը նրանց համար  
յեղել է վոչ թե մայր, այլ չարասիրտ խորթ մայր:

Լեհական սյաները, լեհական մազնատները ինչի՞  
վերածեցին Լեհաստանը: Իր ժամանակին վիցե-պրեմ-  
յեր Կվյատկովսկին հրապարակորեն Լեհաստանը բա-  
ժանում էր անտեսական յերկու տերիտորիաների՝ «Ս»  
տերիտորիայի և «Բ» տերիտորիայի: «Բ» տերիտո-  
րիան—այդ, գլխավորապես, Արևմտյան Ուկրաինան  
և Արևմտյան Բելոուսիան էին: Ամբողջ աժխային,  
մետալուրգիական արդյունաբերութեանը, տեքստիլի,  
չաքարի, ցեմենտի, էլեկտրոտեխնիկական և արդյու-  
նաբերութեան այլ ճյուղերի 80 տոկոսը գտնվում է  
«Ս» Լեհաստանում: Այստեղ, պան Կվյատկովսկու հե-  
ղինակավոր հայտարարութեան համաձայն, գտնվում է  
գազային գործարանների և ջրմուղների ավելի քան 80  
տոկոսը: Այստեղ կառուցված է ճյուղավորված յեր-  
կաթուղային ցանց, այստեղ են տրամվայները քա-  
ղաքներում, տպարանների, կուլտուրական և սանի-  
տարական հիմնարկների ավելի քան 80 տոկոսը: «Ս»  
Լեհաստանը սպառում է ամբողջ էլեկտրոէներգիայի  
93 տոկոսը, արհեստական պարարտանյութերի և դյու-  
զատնտեսական մեքենաների 80 տոկոսը, յերկաթի  
ավելի քան 80 տոկոսը և սուրճի ու թեյի ավելի քան  
95 տոկոսը:

Հակառակ պատկեր է ներկայացնում «Բ» Լեհաս-  
տանը, այսինքն՝ Արևմտյան Ուկրաինան և Արևմտյան  
Բելոուսիան: Բառի տառացի իմաստով՝ գա լեհա-  
կան ֆինանսական կապիտալի, լեհական իմպերիալիզ-  
մի ներքին գաղութն է: «Ս» Լեհաստանը իր Փարբի-  
կաների ապրանքները բարձրացրած գներով վաճա-  
ռում է «Բ» Լեհաստանին և այս ներքին գաղութում  
չնչին գնով գնում է հումք և դյուղատնտեսական  
մթերքներ:



Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի արդյունաբերութիւնը նշանակալից չափով լիկվիդացիայի յեր յենթարկելէ լեհերի սկուպացիայից հետո: Յեւ մահ, չնայած այն բանին, վոր Արևմտյան Բելոռուսիան արտադրում է Լեհաստանի կարտոֆիլի գրեթե քառորդ մասը, լեհական կառավարութիւնը Բելոռուսիայում համարյա լիովին լիկվիդացիայի յենթարկեց կարտոֆիլ վերամշակող արդյունաբերութիւնը—ողի քաշող, մաթի, սալայի գործարանները: Բելոռուսիայի վուչ-մշակող Ֆարբիկաները նույնպէս լիկվիդացիայի յեն յենթարկելէ: Արևմտյան Բելոռուսիան—վուչարուծութիւն կարևորագույն մարզը—վերագործրել են ուժեր ջլատող ճարտարակին: Լիկվիդացիայի յե յենթարկելէ Վիլենշինայի կաշիի արտադրութիւնը, վորով նա մի ժամանակ հռչակված էր: Բելոստոկի—խոշորագույն տեքստիլ սայլոնի—տեքստիլ արդյունաբերութիւն մեջ հենց նույնպիսի պատկեր է: 1929 թվականին Բելոստոկի տեքստիլ արդյունաբերութիւն մեջ յեղած բանվորները թիվը կազմում էր նախապատերազմյան մակարդակի 47 տոկոսը, 1930 թ.—40 տոկոսը, 1931 թ.—37 տոկոսը, իսկ հետո ընթացավ սվելի՝ վատ: Գիշատչարար վոչնչացվում են Արևմտյան Ուկրաինայի ու Արևմտյան Բելոռուսիայի անտառները: Համարյա լիովին լիկվիդացիայի յե յենթարկված Արևմտյան Բելոռուսիայի կահկարասիքի արդյունաբերութիւնը: Իր ժամանակին Լեհաստանը լուցկու մենաշնորհը տվեց նշանաւոր շահագործող, հետագայում սնանկացած «լուցկու արքա» Կրեյդերին: Կրեյդերը փակեց բոլոր Ֆարբիկաները, բացի մեկից, փողոց պցելով և սովի մատնելով հազարավոր բանվորներ ու բանվորուհիներ:

Ի՞նչ է ներկայացնում իրենից Լեհաստանի գյուղատնտեսութիւնը, Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի գյուղատնտեսութիւնը մասնավորապէս: Ի՞նչպէս է այնտեղ գյուղացիութիւն վիճակը, Լեհաստանից ի՞նչ ստացան Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի գյուղացիները: Լեհական կառավարութիւնը կողոպտեց նրանց՝ հոգուտ լեհական կալվածատերերի: Լեհաստանում պահպանվել են բազմաթիւ Ֆեոդալական մնացուկներ,—չերտընդիթիւթիւն, աշխատավճարային սխտեմ և Ֆեոդալական շահագործման այլ ձևեր:

16000 լեհական կալվածատերեր գալթել են ամբողջ հողի 45 տոկոսը: 2 հազար ամենախոշոր կալվածատերեր (հազար և ավելի հեկտար) կենտրոնացրել են իրենց ձեռքում Լեհաստանի բոլոր հողերի մեկ հինգերորդ մասը: Կալվածատիրական կալվածքները գրավում են կրկնակի ավելի տարածութիւն, քան մինչև 5 հեկտար մեծութիւն ունեցող գյուղատնտեսական տնտեսութիւնները<sup>1</sup>: Լեհական կառավարութիւնը կիրառեց կողոպտչական «հողաշինարարութիւն»: Նա խուտրացում կիրառեց Արևմտյան Բելոռուսիայում և Արևմտյան Ուկրաինայում, ըստվորում մեծ մասամբ այդ խուտորներում լավագույն հողերն ստացան լեհական կոլոնիատները—«ոսաղնիկները», նախկին

<sup>1</sup> Բոլոր թվական տվյալները վերցված են «Аграрный вопрос в крестьянское движение» ժողովածվից, տեղեկադրք հ. II, Միջազգային սղբարային կոստիտուտի հրատարակութիւն, 1936 թիվ:



գինավորականները, իսկ չբախտներին հետ մղեցին դե-  
պի ալիազներն ու ճահիճները: Լեհաստանի գյուղացի-  
ները գիտեն աշխարհի մաղնատների անսահման իշխա-  
նությունը, ինչպես Կարոլ Ռաճիվիլը, վորը Պոլեսյեյի  
«Իավիղգրուզով» կարվածքում միայն ուներ 170 հա-  
զար մորդեն հող, ավելի քան 100 հազար մորդեն ունեն  
կոմսեր Մավրիկի Չամոյսկին և Սպեդան, ավելի  
քան 50-ական հազար՝ կոմսեր Սկուժեվսկիները, իշ-  
խաններ Չարտորիսկիները, Լյուբոմիրսկիները, Պո-  
տոցկիները, Յանուշ Ռաճիվիլը և շատ ուրիշները,  
վորոնք լայնորեն հայտնի յեն գյուղացիներին վորպես  
գիշատիչ շահագործույներ:

Ըստ 1927 թվականի հայկեհամարի ձիագործի  
տնտեսություն Լեհաստանում կար 44 տոկոս, կոլտ-  
գործի—14 տոկոս: Պրոլետարական և չբախտ տնտե-  
սությունները կազմում եյին միասին 76,2 տոկոս  
(8,8 պլյուս 67,4): Վերջին տասնամյակի ընթացքում  
գյուղացիությունն է՛լ ավելի յե աղքատացել:

1933 թվականի սեպտեմբերին Վարչավայի Սոցիա-  
լական եկոնոմիկայի ինստիտուտը Կենտրոնական Գա-  
լիցիայում տեղի ունեցած այն խոշոր գյուղացիական  
ապստամբություններից հետո, վորոնք տաղնապի եյին  
մատնել ամբողջ լեհական բուրժուազիային, անկետա  
անցկացրեց գյուղացիների մեջ: Այդ անկետային տըր-  
ված պատասխանների շատ աննշան, իհարկե, խնամ-  
քով գտված մասը տպագրվեց: Մարտափելի՛ պատկեր:  
Հայտնի լեհ գրող Յան Վիկտորը, սարսափելով գյու-  
ղացիները այդ անելանելի դրությունից, գրում եր.  
«Ժողովրդի դրության ընթացիկը տալու համար  
հարկավոր ե գրել վոչ թե գրչով, այլ բուռնցքով,

վոչ թե բողոքով, այլ անեծքով, վոչ թե արյունով,  
այլ յերկաթով»<sup>1</sup>:

Իսկ ի՞նչ են գրում իրենք գյուղացիները:

Մեխովսկի գավառից. «Այժմ կարվածներում կալ-  
վածատերերը կեղեքում են բանվորին ամենախայտո-  
ռակ կերպով, ատանց քաշվելու... Գոյություն ունե-  
ցող որենքները, կանոնները և պայմանագրերը կարվա-  
ծատերերն ամենեւին բանի տեղ չեն դնում, բանվորին  
ստիպում են աշխատել նախկին ցարական որենքների  
համաձայն»: (Եջ 209—210):

Լասսկի գավառից. «Գյուղն այժմ իրեն առաջ  
վոչ մի ապագա չի տեսնում: Հսկայական անհուսու-  
թյուն ե այժմ տիրում գյուղում: Մարդիկ անիմաստ  
թափառում են. ամենուրեք աղքատություն, ամայու-  
թյուն և հուսահատություն... Գյուղերը նման են  
ավելի շուտ գերեզմանատան, քան մարդկային կյան-  
քի միջնակետի»: (Եջ 81):

«Հուսահատությունը տիրո՛ւմ ե մարդու,—գրում  
ե Բուչացիի գավառի մի գյուղացի:—Սա մեղք ե, վոր  
դեպի յերկինք վրեժի յե կոչում: Առատությամբ հաց  
կա, իսկ մենք, գյուղացիներս, կիսաքաղց ենք, իսկ  
կան նաև բոլորովին քաղցածներ: Հագուստ, կոշիկներ  
և վառելիք Լեհաստանում շատ կա, իսկ մենք մրսում  
ենք և մեղ կրծում ե կարիքը... Ինչքա՛ն ծանր ե ապ-  
րելը,—գրչով չի նկարագրվի»: (Եջ 96):

«Արդյոք Վարչավայում գիտե՞ն այն մասին,—

<sup>1</sup> Լեհական գյուղացիներն իրենց կյանքի մասին: Մեջագրային  
ազրարային ինստիտուտի հրատարակություն, Մոսկվա, 1933 թ.:  
Գյուղացիների նամակներ, վոր հրատարակել և Սոցիալական եկո-  
նոմիկայի ինստիտուտը Վարչավայում:

4865  
39





հարցնում է այդ գյուղացին, — վոր մի տուվի թուժու-  
նը դանակով բաժանվում է չորս մասի, վորպեսզի  
կարելի լիներ ավելի հեշտ դնել, վոր լուցկիները հա-  
տով են դնվում... վոր այդ գնվում է գրամներով,  
նավթը գնում են մեկ քառորդ, մեկ ութերորդ լիտ-  
րով, և վոր միքանի խրճիթ ոգտվում են մեկ վա-  
ռիչով»։ (Եջ 102)։

Լոճի գալաօրի հողազուրկ մի գյուղացի գրում է.  
«Սա կյանքի է, այլ բանտ, մահը լավ է այսպիսի  
կյանքից»։

Կարելի չէ բերել գյուղացիների տասնյակ այս-  
պիսի դիմումներ՝ խնամքով ջրկամ նամակների նույ-  
նիսկ այս սերիայից։ Զարմանալի է, վոր միքանի  
գյուղացիներ գալիս են այն յեզրակացութեան, վոր  
«այսպես այլևս շարունակվել չի կարող», վոր «մի  
ժամանակ պետք է դա արգարացի հասարակակարգ,  
այն ժամանակ կվոչնչանա ամեն տեսակի շահա-  
գործում»։ Լեհաստանում միլիոնավոր մարդիկ ապ-  
րում են այդ արգարացի հասարակակարգի հաստատ-  
ման հուսով, վորը վոչնչացնելու յե շահագործումը։  
Բայց մի՞թե նրանք այժմ չգիտեն, վոր այդ հասա-  
րակակարգը նրանց յերկնքից չի ընկնի, վոր Չենտո-  
խովի վոչ մի աստվածածին չի տա նրանց այդ յեր-  
ջանկությունը։

1927 թվականին անգլիական պառլամենտի դեպու-  
տատ լեյորթսո Բեկեաը, վորը յեղել էր Արևմտյան  
Ուկրաինայում, գրում էր.

«Մենք այցելեցինք Վլադիմիրը (Վոլինի) Արև-  
մտյան Ուկրաինայում։ Յես գիտեմ Հնդկաստանը, և  
դուք, հարկավ, լսել եք Հնդկական գյուղերի սոսկավի

աղքատութեան մասին։ Բայց յես յերեք չեմ տեսել  
այսպիսի կեղեքող և ծայրահեղ աղքատություն...  
Այժմ մեզ հասկանալի յե դառնում, թե ինչու Լեհաս-  
տանն այդպիսի մարդաշատ բանակ է պահում»<sup>1</sup>։

Արևմտյան Բելոռուսիայի և Արևմտյան Ուկրաի-  
նայի գյուղացիների գրությունն այն ժամանակվանից  
նշանակելիորեն վատացել է։ 1927 թվականից շաքարի  
սպառումը Վոլինի և Պոլեսյեյի գյուղերում 10 տար-  
վա ընթացքում կրճատվել է 93 տոկոսով, աղինը՝ 72  
տոկոսով, ածխինը՝ 50 տոկոսով։ Շատերի համար  
լուցկին էլ է դարձել անմատչելի, վերադարձել են  
հրահանին և կայծքարին։ Նավթի լամպից—ձեթի  
ճրագի, յերկաթե գութանից—անղըջրհեղեղյան փայ-  
տե գութանի։

Տարիներով այսպես էր ապրում Արևմտյան Բե-  
լոռուսիայի և Արևմտյան Ուկրաինայի կողոպտված,  
խրավազուրկ, նվաստացված գյուղացին։ Սահմանի այն  
կողմից նրան հասնում են ազատ կոլեկտիվ աշխա-  
տանքի ուրախ յերգերը։ Նա տեսնում է, թե ինչպես  
այնտեղ, լավազույն հողերի վրա, անսահման տարա-  
ծությունների վրա, ուրախ աշխատանք է կատար-  
վում, աշխատում են պողպատե մեքենաներ, տրակ-  
տորներ, կոմբայններ։ Նա գիտե, վոր այնտեղ սու-  
միշտ վոչնչացված է Ռաճիվիլների, Սապեգաների,  
Զարտորիյսկիների, Լյուբոմիրսկիների և նրանց  
նմանների իշխանությունը։ Յեվ նա մտածում է, մի՞-  
թե յես պետք է պայքարեմ այն բանի համար, վոր

<sup>1</sup> Բերնար Լեկալ, «Польша без маски», Լեհինգրագ, 1928  
թիվ, էջ 120։



պահպանեմ իմ վրա պաների իշխանութիւնը, վորոնք ինձ դնում են իրապազուրկ պարիսպի դրութեան մեջ: Յեւ Նա հուսով, աղերսանքով իր հայաքը դարձնում է դեպի արեւելք, դեպի իր յեղբայրները, ԽՍՀՄ ուկրաինացիներն ու բելոռուսները:

\*\*\*

Այս տարիների ընթացքում շատ անգամ է պայքարի յեւել Արեւմտյան Ուկրաինայի և Արեւմտյան Բելոռուսիայի գլուղացին անտանկի դրութեան դեմ: Գլուղացիներին՝ իրենց իրավունքները պաշտպանելու յուրաքանչյուր փորձ ճնշվում էր ամենայն դաժանութեամբ: «Речь Посполита»-ն 1925 թ. հոկտեմբերի 2-ի համարում գրում էր. «Մեր ծայրամասերում ստեղծվել է ճակատագրական դրութիւն. յեթե մի քանի տարիների ընթացքում փոփոխութիւն տեղի չունենա, ապա համատարած գինիված ապստամբութիւն կլինի միայն: Յեթե մենք այդ ապստամբութիւնն արդան մեջ չխեղդենք, այն մեզանից կանջատի մի քանի պրովինցիաներ... Ապստամբութեան պատասխանը միայն մեկն է—կախաղան—և ուրիշ վոչինչ: Անհրաժեշտ է այնտեղի բնակչութիւնը վերելի վար յենթարկել այնպիսի տեոորի, վոր նրա յերակներում արյունը կանգ առնի»<sup>1</sup>:

Լեհական ականավոր «գործիչ» և ԽՍՀՄ թշնամի

<sup>1</sup> Քաղվածքները բերում եմ «Запросы белорусских послов в польский сейм. 1922—1926 г. г. Сборник документов о панских насилиях, мучениях и издевательствах над крестьянами и рабочими в Западной Белоруссии» գրքից: Բելոռուսական պետական հրատարակչութիւն: Մինսկ, 1927 թ., էջ XIX:

վաղիսյալ Ստուդենիցկին դրում էր. «Բելոռուսական վոչ մի ժողովրդի մասին խոսք անգամ լինել չի կարող, վորովհետեւ բելոռուսները չունեն սեփական վոչ մի տրադիցիա: Բելոռուսական կուլտուրայի մասին անհնարին է խոսել՝ նկատի ունենալով այն, վոր բելոռուսները չունեն կուլտուրական միասնութիւն»<sup>1</sup>):

\*\*\*

Վերջին քսանամյակի ամբողջ պատմութիւնը ցույց տվեց, վոր լեհական կառավարութիւնը ուկրաինական, բելոռուսական և լիտվական ժողովուրդների վերաբերմամբ անց էր կացնում բռնի կերպով լեհացնելու, այդ ժողովուրդների ազգային կուլտուրան սնարգելու, այդ ժողովուրդների կուլտուրական հիմնարկերը բռնութեամբ լիկվիդացիայի յենթարկելու քաղաքականութիւն: Լուսավորութեան գործը կապալով է տրված խավարամոլներին: Չափազանց պերճախոս է այն փաստը, վոր իր ժամանակին բերել էր «Тыдзень работничі» թերթը (1935 թ. հունիսի 23-ի համարում). Վարչավայի քաղաքային ինքնավարութեան լուսավորութեան ու կուլտուրայի բաժնի գլխավոր պան Բիլիկը ուսուցիչների ընդհանուր ժողովում հրապարակորեն հայտարարեց, թե «տաս կըրթված քաղաքացի պետութեանն ավելի շատ հոգս են պատճառում, քան մի ամբողջ հազար անգրագետներ»: Ահա «Վոյտերի տեղը» դրված այդպիսի մի ֆելդֆերեյլ պետք է արմատավորի և արմատավորում է կուլտուրան: Իսկ կառավարութեան քաղաքա-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ XVII:



կանությունն ուղղված է այն բանին, վոր վոչնչացնի ազգային դպրոցը: Յերբ բելուուսական դպրոցական կազմակերպության զեւեզատները գանդատվում էյին բելուուսական համարյա բոլոր դպրոցների փակման առթիվ, մինիստր Սկուլսիկին նրանց պատասխանեց. «Հավատացնում եմ ձեզ, վոր 10 տարի հետո Լեհաստանում ճրագի լույսով չեք գտնի վոչ մի բելուուս»:

Դեպուտատ Վելիկանովիչը իր պառլամենտական ճառում, վոր հրատարակված է «Дело» թերթի 1935 թիի փետրվարի 12-ի համարում, բերել է հետևյալ տվյալները. լեհական պետության ստեղծման մոմենտում Արևմտյան Ուկրաինայի տերիտորիայում կար 3600 ուկրաինական դպրոց: 1934—35 ուսումնական տարում, պաշտոնական տվյալներով, մնացել եր 457 դպրոց, ըստվորում այդ դպրոցներում ել պատմության և աշխարհագրության, յերբեմն ել ուրիշ առարկաների դասավանդումը տարվում եր միայն լեհերեն լեզվով: 1919 թվականին Վոլինում կար ուկրաինական 1050 դպրոց, իսկ 1936 թվականին—միայն 5 դպրոց: Լեհ ուկրաինացիները Ուկրաինայում փակել էյին ավելի քան 3 հազար դպրոց, Արևմտյան Բելուուսիայում—ավելի քան 400 դպրոց, փակել էյին բելուուսական 4 գիմնազիա և ուսուցչական 3 սեմինարիա:

Լեհական ուկրաինացիների թողած դպրոցներում յերեխաներին ծեծում են: 1934 թվականին «Курьер поранны» թերթը հրատարակեց ծնողների նամակներ, վորոնց մեջ նրանք գրում էյին.

«Դպրոցում ծեծում են: Ծեծում է վարիչը, ծե-

ծում է կսենձը, և նրանց սրինակից խրախուսված՝ ծեծում են մտացածները...

Մենք գյուղում վարժվել ենք այն բանին, վոր ուսուցիչները ծեծում են, մեզ համար այն ուսուցիչը, վորը դպրոց է դալիս առանց՝ «ափերին» հարվածող քանոնի կամ առանց ճիպոտների,—այդ ուղղակի սենսացիա յե»:

Սա յե յեվրոպական այն «քաղաքակրթությո՛ւնը», վոր լեհ պաներն արմատավորում էյին Լեհաստանում, Արևմտյան Ուկրաինայում և Արևմտյան Բելուուսիայում: Դրա հետևանքով Գալիցիայում մայրենի լեզվով սովորում են միայն յերեխաների 5 տոկոսը, իսկ Վոլինում, Պոլեսիայում, Սլովչչինայում ուկրաինական յերեխաների միայն 0,02 տոկոսն է սովորում մայրենի լեզվով: 10 միլիոնից ավելի լեհ ազգաբնակիչյուն անդրագետ է: «Курьер поранны»-ն 1936 թ. հոկտեմբերի 3-ի համարում գրում եր. «1936—37 ուսումնական տարին տարրական դպրոցում սկսվում է ավելի ու ավելի խորացող դպրոցական կրիզիսի նշանաբանի տակ... Դպրոցական հասակի մեկ ու կես միլիոն յերեխա զրկված է դպրոց հաճախելու հնարավորությունից, 16 հազար գործազուրկ ուսուցիչ կա»:

Պարզ չե՞ արդյոք, վոր Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելուուսիայի աշխատավորությունն այդպիսի ստոր ծաղրանքին վոչ թե կյանքի, այլ մահվան պատերազմ է հայտարարել:

Ուկրաինացիների և բելուուսների անտանելի գրությունն այնքան սոսկալի յեր, վոր 1930 թ. լեյբորիստական կուսակցուքյան վաքսուն դեպուտատ-



ների և յերկու լիբերալների ստորագրութեամբ . Հենդերսոնի միջոցով Ազգերի Լիգայի հորինողին մի պետիցիա ուղարկվեց, վորի մեջ ասվում էր, թե Լեհաստանի ուկրաինական ու բելոուսական 700 գյուղերում «հարյուրավոր տղամարդիկ, կանայք և յերեսաններ յենթարկվել են ծեծի, ըստվորում ծեծվածներից շատերը ծեծից մեռել են... Հազարավոր ժողովուրդ բանտերն են քշվել, իսկ բազմաթիվ գորգարաններ, ակումբներ ու կոոպերատիվ կրպակներ կողոպտվել են ու քանդվել»:

Ըստ յերևութին, այդպիսի ջենտլմենների հիշողությունը թույլ է, յեթե նրանք այդ ամենի մասին այսօր մոռացել են:

\*\*\*

Լեհաստանում ըստ սահմանադրութեան ամբողջ իշխանությունը պատկանում է պրեզիդենտին, վորը պատասխանատու յե միայն «աստու և պատմութեան առջև»: Սենատի մի յերրորդ մասը նշանակում է պրեզիդենտը, մնացած յերկու յերրորդը «ընտրվում է» բարձրագույն կրթություն ունեցող անձերի կողմից:

Ամբողջ յերիտասարդութունը մինչև 25 տարեկան հասակը գրկված է ընտրական իրավունքներից: Իսկ թե ինչպես են տեղի ունենում «ինքնավարութեան օրգանների» ընտրությունները, այդ մասին պատմում է Լասսկի գալաօրի մի գյուղացի. «Մեզ մոտ գյուղում տեղի եյին ունենում գյուղական ռազայի ընտրությունները: Բայց, ըստ եյուլթեան ասած, վոչ վոք վոչ վոքի չէր ընտրում, այլ պարզապես վոյսը

(ավագը) բերեց ցուցակը, հրամայեց բոլորին ստորագրել—և վերջ»:

Իշխանութեան դասակարգային շահագործողական բնույթն այնքան է մերկացված, վոր Լեհաստանի նախկին պրեմյեր-մինիստր Վլադիսլավ Գրաբսկին իր «Идея Польши» դրքի մեջ ստիպված էր խոստովանել, վոր «գյուղացին սկսել է գլալ, վոր շլյախտան կրկին իշխում է Լեհաստանի վրա»: Իսկ այդ շլյախտան կարող էր այդ տարիների ընթացքում իշխել միայն սանձարձակ տեռորի միջոցով: Բանվորների, գյուղացիների, ուկրաինական ու բելոուսական ինտելիգենցիայի անտանելի դրութեան դեմ բողոքելու ամեն մի փորձ հասցնում էր ամենազաժան ու պրեսիաների: Անց էր կացվում այսպես կոչված «պացիֆիկացիա», այսինքն, պարզապես, բելոուսական ու ուկրաինական ժողովուրդների կոտորած: Բավական է վերցնել միայն «Запросы белорусских послов в польский сейм» գիրքը: Ահա այդ հարցապահութեաների բնույթի ուղեցույցը.

«Հետապնդում լուսավորութեան ու դպրոցի ասպարեզում. բելոուսական մամուլի հետապնդում. ագրարային բռնի քաղաքականություն. ռազմական գաղութացում. վարչական ապօրինություններ ու հետապնդումներ. անիրավացի մասսայական ձերբակալություններ, չարչարանքներ, ծաղր ու ծանակ. տանջանքներ ու բռնություններ բանտերում. փոստիկանական սպանություններ, բանդիտիզմ ու տեռոր. հասարակական կաղմակերպությունների հետապնդում. կրոնական հալածանքներ. ապօրինի հարկադրում ու ամենատեսակ տուրքեր. տնտեսական ճնշում



և չահագործում. բերրուսական լեզվի արգելում և հետապնդում. սահմանադրական յերաշխիքների խախտում. քաղաքական պրովոկացիա. ազգաբնակչության ծանակում գինյութների կողմից. սովորող յերեխաներին ծաղրի ու ծեծի յենթարկելը»:

Ամենալայրենի բռնությունները, կալվածատերերի կողմից դուռըացիների ու դուռըատնտեսական բանվորների անպատիժ սպանություններն ելին բերրուսական ու ուկրաինական դուռըացիների որինական պահանջների պատասխանը: Ամբողջ սովետներ և վոյեմոտություններ քայքայվում ելին: Չեյին խնայում ծերերին, կանանց ու յերեխաներին, քանդում ելին դուռըացիական ունեցվածքը, հրկիզում ելին ամբողջ գյուղեր:

Առանձնապես անբանելի դարձավ դուռըատնտեսական բանվորների դրությունը: Բանն այնտեղ հասավ, վոր սկսեցին յերեխաներին վաճառել: Այսպես «Иллюстрированный курьер цодзенный»-ն հաղորդում եր մի 11 տարեկան յերեխայի 10 գլուխով, 5 փութ հացով և միքանի փութ կարտոֆելով վաճառելու մասին: Եստ վոյեմոտություններում աշխատանք ստանալու համար հարկավոր եր ունենալ, բացի պրոֆեսիոնալ վորակավորումից, ելի վոստիկանության վկայությունը բարեհուսության մասին, կաննձի վկայությունը խոստովանելու մասին և հակաթողութեական ռեսակցիոն ֆաշիստական «Стрелец» կազմակերպության վկայությունը:

Ամենահեղափոխական դատակարգը—բանվոր դատակարգը տեսորի յե յենթարկված: Լավագույն բանվորները նստած են բանտերում, դատապարտված են

տաժանակրության: Պրովոկացիան բանվոր դատակարգի մեջ իրեն բուն եր հյուսել: Բանվոր դատակարգը վոչ մի բուպե չեր դադարեցնում պայքարը, չնայած վոր լեհական կառավարությանը հաջողվել եր ամենուրեք դատավորել դավաճանների, պրովոկատորների իր ագենտուրան: Լեհաստանի բանվոր դատակարգն անցյալում դատակարգային պայքարի վառ եջեր շատ ե ունեցել: Նա կդտնի իր ճանապարհը, վորովհետև նա գիտե, վոր բերրուսական ու ուկրաինական դուռըացիները, վորոնք բուն կերպով լեհացվում են, պայքարելով յեռակի ճնշումից ալատադրվելու համար, միևնույն ժամանակ պայքարում են այնպիսի կարգեր ստեղծելու համար, վորոնց որով անտամեկի յիներ հակաթողութեական նման քաղաքականությունը, քաղաքականություն, վոր անց ելին կացնում Լեհաստանի կառավարող դատակարգերն այդ տարիների ընթացքում:



«Ազատ չի կարող յինել այն թողութուրը, վորը ճնշում ե ուրիշ թողութուրները», այսպես ելին ասում XIX դարի հետևողական գեմոկրատիայի մեծագույն ներկայացուցիչներ Մարքսն ու Ենգելսը»,—գրում եր Լենինը «Վեիկոտոսների ազգային հպարտության մասին» հոդվածում իմպերիալիստական պատերազմի ժամանակաշրջանում: Այն, ինչ վոր «խաղաղ» ժամանակ հսկայական ծանրությամբ ճնշում ե թողութուրական մասսաների վրա, այդ մասսաները պատերազմի ժամանակաշրջանում զգում են առանձնակի սրությամբ, յերբ ուժեղանում, խորանում են սոցիալական բոլոր հակասությունները: Այդ առանձնապես



պետք է ասել իմպերիալիզմի դարաշրջանի նրա տե-  
րագմաների մասին:

Մենք տեսնում ենք, թե ինչպիսի ծանր, իրաւա-  
զուրկ, ճնշված, անտանելի դրութեան մեջ են գտնու-  
վում Լեհաստանի աշխատավոր մասսաները, առանձ-  
նապէս Արեւմտյան Ուկրաինայի և Արեւմտյան Բելո-  
ռուսիայի աշխատավորները:

«Խորհրդային կառավարութեան չի կարելի  
նաև պահանջել անտարբեր վերաբերմունք դեպի ար-  
յունակից ուկրաինացիների և բելոռուսների բախտը,  
վորոնք ապրում են Լեհաստանում և առաջ գտնվում  
էին իրաւազուրկ ազգերի վիճակում, իսկ այժմ հենց  
բոլորովին պատահմունքի կամքին են թողնված»:  
Այդպէս հայտարարեց Խորհրդային կառավարութեան  
գլուխ ընկեր Մոլոտովը:

Այժմ վճռվում է այդ ժողովուրդների բախտը:  
Նա խորապէս հուզում է մեզ: Արեւմտյան Ուկրաինայի  
և Արեւմտյան Բելոռուսիայի աշխատավորները, Լե-  
հաստանի աշխատավորները դիտեն, վոր խորհրդային  
ժողովուրդն իր ամբողջ սրտով, իր լայնազույն մըտ-  
քերով իրենց հետ է: Ահա թե ինչու նրանք ցնծու-  
թեամբ են դիմավորում Բանլորա-Պյոտկայիական  
Կարմիր Բանակին:

Ահա բազմաթիվ հաղորդումներից մեկն այն մա-  
սին, թե ինչպէս են դիմավորում Կարմիր Բանակին  
Արեւմտյան Բելոռուսիայում:

«Ամենուրեք, վորտեղ յերևում են մեր զորամա-  
սերը—Մտոլըցիի մոտի գյուղերում, Նովոգորոդեկի  
ոայտում, Մոլոդեչնոյում, մեր յեղբայրները—արե-  
ւմտյան բելոռուսները բացառիկ հրճվանքով են դիմա-

վորում փառապանծ Կարմիր Բանակին: Նրանք ուրա-  
խութեան արցունքներով նետվում են հրամանատար-  
ների և կարմիրբանակայինների դիրկը, առաջարկում  
են խնձորներ, կաթ: Ուրախութեանն այնքան մեծ է,  
վոր ամեն մի գյուղացի պատրաստ է տալու կաթի  
վերջին բաժակը, կիտելու հացի վերջին կտորը:

Շատ անգերում ազգաբնակչութունը դեռ միայն  
խորհրդային զորքերի մոտենալիս պոկում է լեհական  
դրոշակները և կառավարական հիմնարկների ցուցա-  
նակները, փողոցներում կախելով կարմիր կտորները»:

Խորհրդային կառավարութեան միջոցառումները,  
վորոնց մասին սեպտեմբերի 17-ին ռադիոյով արտա-  
սանած իր ճառի մեջ խոսում էր Խորհրդային կառա-  
վարութեան գլուխ ընկեր Վ. Մ. Մոլոտովը, միահա-  
մուռ հավանութեան են արժանանում խորհրդային  
ամբողջ ժողովուրդի կողմից, վորը հասկանում է, վոր  
այժմ Լեհաստանում ստեղծված դրութեանը Խոր-  
հրդային կառավարութեան կողմից պահանջում է  
առանձնակի հոգատարութուն սոցիալիստական պե-  
տութեան անվտանգութեան մասին: Մեծ Խորհրդային  
Միութեան ժողովուրդները խորին ուրախութեամբ  
վողջունում են մեր հերոսական Բանլորա-Պյոտկա-  
ցիական Կարմիր Բանակին, վորն իր պաշտպանու-  
թեան տակ է վերցրել Արեւմտյան Ուկրաինայի և  
Արեւմտյան Բելոռուսիայի բնակչութեան կյանքը և  
գոյքը:

«Правда» 1939 թ. սեպտեմբերի 19:





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Պատմական վճիռ . . . . .	3
Ում ենք մենք ողնության դեում . . . . .	11

Խմբագիր Բ. Ն. Դավթյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Սրբագրիչ Հ. Դոլուխանյան  
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

---

Գրավիտի լիազոր № 4. 2526, հրատ. 742  
Պատվեր № 213, տիրաժ 10.000  
Հանձնվել է արտադրության 20/X 1939 թ.  
Ստորագրվել է տպագրելու 29/X 1939 թ.  
Գինը 20 կ.

---

Քաղաքական գրականության պետական հրատարակչության  
տպարան, Յերևան, Ալլահվերդյան № 65



8

« Ազգային գրադարան



NL0185557



ԳԻՆԸ 20 Կ.

КОМУ МЫ ИДЕМ  
НА ПОМОЩЬ

Государственное издательство полит. литературы  
Ереван ● 1939